115. ՀՈՒՆՑ ՊԵՆ ԸՐԱ, ՎԸԵՐ ՓՈՒՇՄԱՆԻՍ ՎՈՒՉ

Մին թաքավըեր տո̈ւն ա կյամ ո̈ւրան երգյիրը շոռ կյա̈լի, հազզար ու մին խոսկ ա ըսկանում, լա̈վ ու փիս պեններ ըն նաղլ անում, հու վըեր մինա̈ն մին փիս պեն ար ասում, էն փիս պեն ընողըեն կլը̈խը դա̈ստին կտրել ար տամ։ Սաղ երգյիրն էտ թաքավըերն ա̈րնավ ծասկում ա։

Մին օր էլ ո̈ւրա̈ն մարթոցը նըհետ վըեր շորերը փոխած տո̈ւն ա կյամ ո̈ւրա̈ն երգյիրը շոռ կյա̈լի, տըեսնում ա վըեր մարթիքյ ըստըեղ-ընդըեղ խոսում ըն, թա մըեր էս թաքավըերը հինչ ա՞ ըսկացալ։ Մեհետ էլ մին մըեծ մարթու ծեն ա տամ, թա՝ ա՛ հըլիվուր, դողուրն ասըե, թաքավըերը էս լոխ դո̈ւզ ա՞ անում, թա չէ։ Էտ հըլիվուրը թա՝ քեզ ճինանչում չըմ, գյա̈ղդո̈ւմ չըմ՝, թա հու վըռ, հինչ ըս, վըեր կլը̈խըս էլ կտրըես, դո̈ւզը պիտի ասըեմ։ Սա թա՝ ես թաքավըերն ըմ։ Էտ հըլիվուրն ասում ա.—Օղըմ ըս ինձ ըսպանեն, հինչ օղում ըս ըրա, էս լոխ դո̈ւզ չըս անում, ամմըեն մարթու ըսածեն հվատում ըս, մինը զորթ ա ասում, մինը՝ սուտ, ամմըենաշատը սուտ ըն ասում, պիտի հազզար հետ մտածես, լա̈վ տըենդըղես, քու մարթուցը նըհետ մըսլըհաթ անըես, տըեսնաս վըեր խոսկ կինի սուտ, վըերը՝ զորթ, նոր էտ լոխ անըես։

Թաքավըերը ետ ա տըեռնում քյինա̈մ ո̈ւրա̈ն նա̈զիր-վեզիրին նըհետ նստում-մտածում, թա հինչ պիտի անըեն։ Սո̈ւրթ-սո̈ւրթա̈ն ո̈ւրա̈ն հրամանն ա ետ յոր օնում, տրանա ետն էլ փիս պեն ընո-

ղըեն անա յէլ վըեր պեն ար ըսկանում, ծ՛իրան մարթուցը հվաքում ար, մալըհաթ անում, խըեյք-խըեյքու վըն տամ, նոր պատիժ տամ։ Երգյիրն ըսկսում ա հինդարդվիլը, ճրո՛նը պըկասում ա։

Մին օր էլ թաքավըերը շորերը փոխած տո՛ւս ա կյամ, թա տըեսնա ծ՛իրան երգյիրումը հինչ կա, հինչ չի կա։ Մուտանում ա մին քանի հըվաքված մարթու խոսըցընում, նահանք թա՝ մըեր թաքավըերը էս ա մեհենգյ երգյիրը կարքին հինդիրտցրալ ա. առաչ մին ըռնախում զատ ար։